38. ԹՈՒՐՔՄԱՆ ՕՂԼՈՒ ՀԵՔԻԱԹ

Ժամանակով մի թագավոր է էղնում, էս թագավորը ունենում է մեկ թաք տղա։ էս տղեն ամեն օր էրթում է ավուղուշ։

Մի օր լալեն ասում է թագավորի տղին.— Հա՛, դու թագավորի տղա ես, համա քու խելքդ հեչ բան չի կռում։ Դու չի համար ես մենակ էրթում ավուղուշ։ Հ՚իրկուն որ էրթում ես տուն, ոտներդ կը ծեծես գետին ու կոսես. «Ես թագավորի տղա էղնիմ ու մինակ էրթամ ավուղո՞ւշ, յա ընձի հընկեր, յա թե չէ մեռնում եմ որ մեռնում եմ», թագավոր քեզի հընկեր կը դրստե։

Թագավորի տղեն հ՚իրկուն գալում տուն, ոտներ ծեծում է գետին ու ասում հորը.— Ես թագավորի տղա էղնիմ ու մինակ էրթամ ավուղո՞ւշ, յա ընձի մի քանի ընկեր, յա թե չէ մեռնում եմ որ մեռնում եմ։

Թագավոր զարմանում է, թե էս ի՞նչ հանդիպավ էս տղին։

Չէ, թագավոր սաբախտան մի քանի լավ ղոչաղ ջահելներ թոփ էրեց քաղքի միջից, տվեց տղին, հելան լալի հետ գացին ավուղուշ։

Լալեն էլի էկավ թագավորի տղի մոտ.— Ղորդ որ դու թագավորի տղա ես, ամա խելք չունիս։ Գնա՛ իրկուն թագավորին ըսա թե. «Ցա ընձի իմ լման, չեշիտը, բոյը ամեն բան, մեկ տղա կը գտնիս, յա թե չէ՛ ես մեռնում եմ»։

Թագավորի տղեն իրկուն տուն էկավ նիաթ-միաթ կախած, ոտները գետին ծեծեց ու ըսավ.— Ցա իմ չեշիտի, իմ բոյ ու բուսաթի-

լման մեկ տղա կը գանիս ընձի հընկեր, յա թե չէ ես մեռնում եմ, որ մեռնում եմ։

Թագավոր կոսե.— Տո՜, ջանըմ, էս տղեն իր խելքը կորուցել է, էս ի՞նչ է ասում, ես չեմ իմանում։

Խոլասա, ճարը կտրում է հ'ելնում սարախտան կանչում է իր վաղիր նազիրներին, որ էս բանի ճարը գտնին։ Թոփ էղան էկան, բերին թագավորի տղի պատկերը քաշեցին մեկ քանի հատ ու թագավորի նկարչիք հ'ընկան էրկրե էրկիր ման էկան, որ որդի որ գանին էդ պատկերի պես, քաշեն բերեն։ Որն որ թագավորի տղի լման գտնի բերե, ինչ որ լեզուն պտտի թագավոր պտի տա։

Հ'ելան թագավորի մարդիկ, ամեն մեկ թարաֆ գնացին։ Թագավոր էնենց թամբահ տվեց որ.— Վեվ որ առանց գտնելու գա, էնոր գլուխը կուտամ։

Առան իրանց թագավորի խազնեցեն բազում փարա ու հայտե գնացին։

Հ'ուրտե որ մեկ տղա էին տեսնում քիչ թագավորի տղի լման՝ հանում էին պատկերները աշում էին։ Էսենց շատ ման էկան իրանց էրկրի մեշ, թագավորի տղի լման չճարվավ։ Խոլասա էկան հասան, ինչունի թուրքման էլին։ Էկան դեմ առան մեկ քաղքի։ Քաղքից դուս տեսան մեկ տղա ու մեկ պզտիկ աղջիկ։ Էդոնց որ տեսան, հանեցին թագավորի տղի պատկերը աշեցին՝ որ թագավորի տղեն ու էդ տղեն ինչրխ որ մեկ խնձոր էղնին կիսած, թե որ հ'իրար մոտ կայնած էղնին մարդ չի կռնա հ'իրարուց ջոկե։

— Այ տղա, դու հ'ո՞ւմ տղեն ես, ի՞նչ է քու հոր անուն։—Հարցնում է թագավորի մարդը։

— Աղա, մենք մի քասիր մարդու տղա ենք, ի՞նչ ես գրում մեր հոր ու մոր անունը։ Վեվ գիտե էս քաղքի մեշ էնոնց անուն, որ քեզի էլ սալրդ տան։

— Թե որ էդենց է, այ տղա դու արի հ'առաջ հ'ընկի, էրթանք ձեր տուն։

Տղան ու էդ աղջիկ առնում են ձիավորին ու դյուզ էրթում են իրանց դուռը կայնում են։ Դուս են գալում տան շենլիքը, աշում են, որ մի երևելի իշխան ձիով իրանց դուռ կայնել է։ Զարմանում են էդ աղքատ մարդիկ. «Հա՜յ հա՜յ, էս ինչրխ բան է, որ էս իշխան մարդ, էս սաղ քաղաք թողե, էկել է մեր դուռ, մենք աղքատ մարդ, մո՞նց պտի ըստոր տեղավորցնենք»։

— Բարև աղբեր, միսավիր չե՞ք պահում էս գիշեր։

— Աղա ջան, մենք աղքատ քասիբ մարդիկ, մենք քեզի ի՞նչրխ տեղ տանք, ոչ յաթախ ունինք, ոչ ձիու տեղ։

Թագավորի մարդը հանում է մեկ բուռ օսկի տալում ու ասում է.— Առեք էս օսկին ձեզի, մեկ էս գիշեր ընձի ու իմ ձիուն տեղ տվեք։

Քասիբ մարդ, մեկ բո՞ւռ օսկի. ինչքան որ կճուճ ման չաման ունեին, շարդ ու փշուր արին, սոխախը լցին ու ձիավորին տեղ տվին։ Գնացին նստան դինշացան, հաց, կերակուր բերին, կերան։ Օսկին շատ, քաղաքն էլ մոտ, ամեն բան էլ բոլ էր։

Վախտ անցավ, էդ մարդ ըսավ.— Բարեկամ, ես էս ինչ թագավորի լալեն եմ, էկած եմ, որ ձեր տղեն տանիմ թագավորին։ Թագավոր ձեր տղեն հուզում է։ Ձեզի մի ռուբ օսկի կուտամ։

Հերն ու մեր լացին թե.— Ինչրխ կըլլի որ մարդ, ինչքան էլ որ քասիբ էղնի, իր էրեխին փարով ծախե, էն էլ մենք, որ էս մեկ թաք տղեն է, չի ըլլի որ չի ըլլի, մենք մեր տղեն չենք տա։

Թագավորի լալեն շատ համոզեց հորն ու մորը։ Հերը քիչ կակղըցավ, ամա մերը շատ էր լալում։ Մարդը բաշլայեց կնկան համոզել թե.— Ա՛յ կնիկ, շատ որ զոռենք, թագավորի հերսը գելնի ու զոռով կը քաշե կը տանի, համ տղեն մեր ձեռքից կէրթա, համ էլ փարեն[1], մենք թագավորի թև կարա՞նք օլրել, էլի լավ է, օսկին էլ առնինք ու տղեն տանք։ Բալքի աստուծ էսենց էր կամք տեսե։ Աստուծ չի կարա՞ էլի տղա տա։

Թագավորի լալեն հ'ելավ առավ տղին ու դեմ էրեց էրկիրն ու գնաց։ Էրթում հասնում է իր թագավորի քաղաք, տանում տղեն տալում է թագավորին։ Թագավոր որ տեսնում է տղին՝ զարմանում է, գիտե թե իսկական իրա տղեն է, ասում է.— Հալալ էղնի քեզ լալա, էս մո՞նց գտար էս տղին, հ'ո՞ւրտից բերիր։

— Թագավոր ապրած կենա, շատ ման էկա, գնացի հասա ինչունի թուրքման էլին, ընտից, մեկ աղքատ մարդու տղա էր, մեկ ռուբ օսկի տվի, բերի։

Հ'եգսի օրը թագավոր Թուրքման օղլուն մեկ ղաթ լավ հալավ կռել տվեց, իր քահլան ձիաներու միջից մե լավ ձի, մե ղաթմ էլ սիլահ տվեց, էնենց էղավ, որ յոթն օր մարդ աշխատեր չէր կարա թագավորի տղից շոկե։ Դրին թագավորի տղի հետ գնաց ավուղուշ։

Էսենց մեկ օր, էրկօր, մեկ շաբաթ, թե մեկ ամիս անցավ։ Թուրքման օղլին էնենց ավուղուշի մեջ սորվավ, որ էլ հեչ ոչնչեն

---

[1] Բնագրում՝ «համ տղեն մեր ձեռքից կէրթա, համ էլ տղեն» (Ս. Կ.)։

չէր վախենում։ Շատ էլ ղվաթով էր, ինչի որ ձեռ էր քցում բերում էր ու շատ էլ կռիչ ու սրտոտ էր։

Օրրմ լալեն կոսե թագավորի տղին.— Դու թագավորի տղա ես, ամա ոչինչ չես հասկանում։

Թագավորի տղեն կոսե.— Ինչրխ թե ես ոչինչ չեմ հասկանում, յաղո՞ւզ։

— Էնենց, ոչինչ չես հասկանում, բայլու է որ էս Թուրքման օղլին, որ դու բերել տվիր, քեզնից համ խելքով է, համ էլ զորբա։ Վաղ, քու հերդ որ մեռավ, էս տղեն քու թագավորութուն կառնի։

— Մո՞նց անեմ,— կոսե թագավորի տղեն,— որ էս տղից ազատվիմ։

— Ինչրխ կոնե՞ս, իրկուն էրթում ես թագավորի մոտ, կոսես թե. «էս տղին ինչրխ որ բերել ես տվեր, կորցնում ես էնենց էլ կորցրու, թե չէ, ես մեռնում եմ»։

Թագավորի տղեն իրկուն նիաթներ կախած գալում է տուն։ Թագավոր աշում է, որ տղի նաշիաթը էլի տեղ չէ։

— Ի՞նչ է էղել որթի, էլի էգենց նիաթներդ կախել ես, չ'ըլլի՞ քեֆ չունիս։

— Ի՞նչ պտի ըլլի, էս Թուրքման օղլին, որ դու բերել ես տվեր, կորցնում ես, կորցրու, էնենց որ հեչ չերևա, թե չէ ես մեռնում եմ։

— Ա՜յ շանըմ, ա՜յ որթի, դու ասիր, ես էսքան ծախս էրի էդ տղին գտա բերի, հիմի էլ կայներ ասում ես կորու։ Ախր ընչի՞ ես էգենց անում, չէ որ ես էլ մեղք եմ։

— Չէ, չ'ըլլի որ չ'ըլլի, ես մեռնում եմ։

Սարախտան, թագավորի ճարը կտրած, կանչում է Թուրքման օղլուն ու ասում է.— Որթի, էղ շորերդ էլ, էդ ձին ու էդ սիլահներդ էլ քեզի, դառի, գնա՛ քու հոր տուն։ Ես չեմ ղմշում քեզի վնասել, գնա՛, աստուծ քեզ հետ։

Տանում, Թուրքման օղլուն քաղքից հանում ճամբի է դնում։

Տղեն կանչում է իր աստուծ ու քշում ձին, էրթում է։ Ամառվա շոքը սխմում է, ծարվութունից լեզուն չորանում է, անոթութուն էլ մեկ կողմեն, շուր չկա, բան չկա։ էրթում, էրթում տեսնում է որ հեռու մի ծառ է երևում, չորս բոլոր կանանչ չայիր, չիման։ Քշում դյուզ էրթում է, հիշնում է ծառի շվնքին, ձին կապում է ծառից, աշում է մեկ լավ պաղ աղբուր։ Կուշտ խմում, ղինշանում է, հաց ուտում ու պառկում ծառի շվնքին ու լավըմ քնում է։

Մենք խաբար տանք թագավորի տղից։

Լալեն էս անգամ էլի ասում է.— Հա՛, դու թագավորի տղա ես,

ամա քու խելքդ բան չի կռում։ Դու հ՚ուր թողեցիր Թուրքման օղլուն գնա։ Գնա թագավորին ըսա թե. «Ցա կը թողնիս էրթամ իմ հընկերին հասնիմ, յա՛ թե չէ մեռնում եմ, որ մեռնում եմ»։

Թագավորի տղեն էրթում ասում է հորը.— Ցա ընձի կը թողնիս էրթամ գտնիմ իմ ընկերին, յա թե չէ, ես մեռնում եմ։

— Այ տղա, դու, իմ էս ըխթիար վախտիս բան չմնաց որ իմ գլխին չ՚բերիր։ Մեկ, ահագին փարա խարշեցի էդ տղին գտա բերի, հիմի էլ փոշմներ ես, ըսում ես էրթամ տղին գտնիմ։ Ես չ՚գիտեմ թե հ՚որե՞նց անեմ քու հետ։

— Չես թողնում, ես էլ մեռնում եմ։

Թագավորի իլլաճը կտռվավ, հ՚ելավ զորքով իր տղին ճամբու դնելու։ Մի հաբիկա օսկի տվեց, քաղքից դուս հանեց ու ըսեց.— Թուրքման օղլին էս ճամբով գնաց, դուն էլ էդ ճամբով գնա։

Թագավորի տղեն իր հոր ձեռքը պագում է, մնաս բարով է ասում ու հայտե Թուրքման օղլու հ՚ետևից էրթում է։ Էրթում, էրթում է, շատ ու քիչ աստուծ գիտե, էրթում աշում է, որ դյուզ մի կանանչ շայրի մեշ մի ծառ է էրևում, մոտն էլ մի ձի կապած։ Քշում, էրթում, աշում է, որ Թուրքման օղլին է քներ։

Ասում է. «Թե որ ըստուր զարթեցնեմ, վայ թե հ՚ելնի ընձի սպանե»։ Ահու չի զարթեցնում, ինքն էլ կռնակը տալում է էնոր կռնկին, ձին էլ կապում է ծառից ու պառկում է, քնում։

Դու մի ասեր, էդ տեղն, որ թագավորի տղեն ու Թուրքման օղլին քնել են, էդ տեղ հարամու տեղն է։

Հարամի բաշին հ՚ելավ դյուրբին դրեց աչքին, աշեց որ էկու ձիավոր իրանց ծառի տակ պառկել են։ Կանչեց իր ընկերներուն, ըսավ.— Օձն իր պորտով, հավքն իր թևով, էս տեղերից չի կարա անցնի, էս ինչրխ է էղեր, որ էրկու ձիավոր էկեր, մեր սինոռը մտեր ու դինշ էլ պառկեր քնել են։ Էդ մարդիկ էրկու հոգի են, դուք իրեք հոգի, գնացեք, սպաննեք ու ձիերը առեք, արեք։

Հարամի բաշին իրեք ձիավոր ճամբեց. հեծան, էկան։

Թուրքմանի տղեն էլ իր քուն առնում, կշտանում, հ՚ելնում աչքերը տրորելեն աշում, տեսնում, որ թագավորի տղեն լերդը իր լերդեն է տվեր ու քներ է։ Տեսնում է, որ վերևից էլ իրեք ձիավոր զիլ, դյուգին դիպա իրանց կողմն են գալում, Թուրքման օղլին ասում է. «Էս թագավորի տղեն վախկոտ է, ես ըստոր հետ հ՚ընկերութուն արել եմ, թե որ զարթեցնեմ, ես գիտեմ կը վախնա, ես մենակ, կանչեմ իմ աստուծն ու էստոնց հետ կռվիմ, ինչ գալում է գա»։

Հ'ելնում, ամեկուն մեկ թուր է քցում։ Իրեքի գլուխն էլ թռցնում է, ձիերը բռնում, բերում կապում։

Հարամիք որ էկան հասան Թուրքման օղլու մոտ, հարամի բաշին էլի հ'ելավ գուրբին դրեց հ'աչքերին աշեց, տեսավ որ էն ձիավորներից մեկը հ'ելավ, իր ղավազների իրեքի գլուխն էլ կռեց, էն մեկը պառկած տեղից էլ չելավ։ Կանչում է հընկերներին ասում է.— Մեր հընկերներին իրեքին էլ սպանին, հեծեք էրթանք հավարի։

Հարամի բաշին իր հընկերներով հեծան ձիանը, կրակի պես քշեցին, էկան, հասան։ Թուրքման օղլին կանչում է իր աստծուն, քաշում է թուրը ամեն մեկու գլուխը մեկ դին է քցում, գալում նստում է թագավորի տղի գլխի վերև։ Քիչ մնում է, թագավորի տղեն զարթնում է, տեսնում է շանդկներ ու ձիաներ, լեղին պառվում է։

Թուրքման օղլին ասում է.— Ի՞նչ ես վախենում, դու տղամարդ չե՞ս։

— Ես մո՞նց չը վախնամ, իմ գալու վախտ մեկ ձի էր, հիմի էղեր է օխտ ձի, օխտ էլ շանդակ։

Հ'ելան թագավորի տղեն ու Թուրքման օղլին հեծան ձիերը, հարամոց ձիերն էլ քաշ տվին ու դյուզ քշեցին դիպա հարամու մաղարեն։

Էրթում մտնում են հարամու մաղարեն, աշում են որ, ի՞նչ աշեն, խազնա, մալ, դովլաթ։ Հարամիք թալներ ու բերեր լցեր են հոդ։ Մեկ քանի օր ըդտեղ կեցան։

Օրըմ թագավորի տղեն ըսում է Թուրքման օղլուն.— Ախպեր, ես թագավորի տղա, իմ հերը աշխարքի տեր ու ավլատ էլ չուներ, ես էլի քու խաթեր չ'մնացի, հ'ելա էկա, հասա քեզի, որ էրթանք աշխարք ման գանք, հիմի էկանք էս սարի գլուխ մնացինք։

— Դարդ մի անէր, ախպեր ջան, մենք ըստե չենք մնար, կէրթանք։

Հ'եգսի առավոտ հ'ելան, իրանց բավական օսկի, խազնա վերուցին ու հեծան ձիերը ու քշեցին։ Շատ են էրթում թե քիչ, աստուծ գիտե, էրթում դեմ են առնում մի թմբի։ Քշում ձիանը, հ'ելնում են դարի գլուխ, աշում են, որ մի լավ քաղաք է էրեվում։ Քշում էրթում են դիպա քաղաք, մտնում են քաղքի մեշ, էրթում մի բարձր շուշարանգլի, սիրուն քոշկ ու սարայու մոտեն անցնում են։ Թագավորի տղեն վեր է աշում, թե էս ինչ լավ շինուվթուն է, տեսնում է, որ մի սիրուն, անլման աղջիկ կախված է փանջարից։ Աղջկա սիրունությունը որ տեսնում է թագավորի տղեն, խելքը գլխուց էրթում է, ձիուց

վեր է գալում, էսօր էս մեռեր, թե մի տարի հ'առաջ, հ'ընկնում է գետին։

Գեջգան գեջ տղի խելքը գլուխն էկավ, Թուրքման օղլուն ըսավ.— Ես մեռնում եմ, որ մեռնում եմ։

— Ախպեր, քեզի ինչ էղավ, որ մեռնում ես, ախր ամեն ընչին ղայտա՛ կա, էս ճամբի օրթա տեղ ես ի՞նչ անեմ։

— Չէ, յա՛ էս փանջարից երևացող աղջկան գուզես, յա թե չէ ես մեռնում եմ։

— Ախպեր, լավ, հլա հ'ելի երթանք մի տուն, հ'իշնենք, աչենք ինչ ենք անելու, հարց ու փորձ անենք, աչենք հ'ո՞ւմ աղջիկն է, հ'ումը չէ, հ'ետև հալբաթ մի բան կոնենք։

Քշեցին ձիանը էդ ահագին քաղքի մեջ, գացին մեկ աղքատ պառավ կնկա դուռ իջան։

— Քալե՛, մեզի էս գիշեր մի տեղ չե՞ս տալում քնելու։

— Ձեր գլխին ղուրբան, ես մեկ քասիբ պառավ, տեղ չունիմ, բան չունիմ, գոմ չունիմ ձեր ձիերուն, ես ի՞նչրխ անեմ։

— Ա՛ռ քեզի մի բուռ օսկի, մեզի տեղ արա։

Պառավ օսկին որ տեսավ, ոտներ գետնից կռավ, իրանց էլ տեղ արավ, ձիանուն էլ։

Հ'իրիկուն պառավ դնում քաղքի մեջ իր միսավիրների համար լավ-լավ կերակուրներ է բերում, ուտում, խմում, դինջանում են, հ'ետև Թուրքման օղլին ըսում է պառավին.— Քալե՛, դու մեր մերն ես, մենք մի խորհուրդ ունինք քեզի պիտի ասենք, տեսնենք դու ի՞նչ կըսես։ Քաղքի միջոց անցած վախտ, մի սիրուն քոշկ ու սարայու տկից անցանք, էդ տան փանջարից մի աղջիկ իրան դուրս էր քցեր, էս հ'ընկերքս տեսավ թե չէ խելքը գնաց, հիմի դրեր է իմ վրես, ասում է. «Ցա էդ աղջիկ ընձի գուզես, յա ես մեռնում եմ», հիմի մեր բանը քեզի է հ'ընկեր, դու գիտես։

— Լավ, դու որ ընձի մեր ըսիր, էդ չաթին է, մոնց որ էղնի պետք է չարալամիշ էղնիմ։ Էդ աղջիկը մեր թագավորի աղջիկն է, հ'ուզեր են խանի տղին, հարսնածն էլ էկել է տանելու։ Հ'եգուց տանում են, որ էգենց է ընձի մեկ ղաթ իշխնի կնկա շոր առեք, ես էլ երթամ աղջկան տեսնելու։ Քաղքի թոմարի հարուստների, իշխնների ու վազիրների կնկըտիք երթում են տեսնելու։

Հանում բուռըմ օսկի էլի տալում են պառավին թե՝ գնա քու սրտի հ'ուզած հալավը կռել տուր քեզի։

Պառավը գնաց, մի ղաթ լավ էնենց հալավ կռել տվեց, որ քաղքի օնչովի կնիկն էլ էգենց հալավ չուներ։

Պառավ իրկուն զուքվավ, էհրամը գլխին քցեց, դյուզ գնաց թագավորի աղջկա օթխի դուռ կեցավ։ Թախկ-թախկ դուռը տալում է, հ'ելնում դուռը բանում են, էրթում թագավորի աղջկա կողքին նըստում է։ Վեվ է իմանում, որ աղքատ պառավ է։ Աշում են խաս-խաս շորերին ու թոմրից վերև տեղ են տալում։ Գալող իշխնների, վազիրների կնկտիք թոմար գնացին, մնաց պառավն ու թագավորի աղջիկը։

Պառավը ասում է.— Թագավորի աղջիկ, ես քեզի մի բան կոսեմ, հմա վախենում եմ։

Աղջիկը կոսե.— Խոսիր, յազո՞ւզ ես վախենում։

Աղջիկն էլ հասկցավ ինչ օլաջախը։

— Սեր տուն էրկու ձիավոր են էկած,— կըսե պառավը,— քոռ փանջարի տկից անցած վախտ մոնց է էղեր թագավորի տղեն քեզի տեսեր է, հիմի ասում է. «Ես էն աղջկա համար մեռնում եմ»։

— Ա՜խ, քալե՜, հգա ե՞ս ինչրխ վառվում, էրվում եմ էն տղի համար։ Հիմի դու գիտես, հունարը մնաց քեզի։ Ա՜յ, իմ էս շորերը լավ տեսնում ես, կէրթաս տղին կոսես թե, իսկ իմ էս շորերի պես մե ղաթ շոր կռել կուտա, կը հագնի։ Շանց կտաս մորս գերեզմնի քումբեթը, թող էրթա հոն մտնի, հ'եգուց ես որ էկա հոն, կոսեմ թե՝ թողեք ես մտնիմ իմ մորս գերեզման ուխտ անեմ ու գամ, ընտի ես կմնամ, տղեն կէրթա իմ տեղ։ Էսենցով թե որ մի բան արինքարինք, չարինք, ես էլ եմ մեռնում։

Պառավ հ'ելավ գնաց, որ թագավորի տղեն ու Թուրքման օղլին իրեն են բաքլայում։

— Ի՞նչրխ էրիր քալե,— հարցնում է Թուրքման օղլին։

— Մեր թագավորի աղջիկն էլ է մեռնում թագավորի տղի համար։— Ու պատմեց էդոնց, մոնց որ թագավորի աղջիկ թամրիհ էր արեր։

Թուրքման օղլին պառավի հետ հ'ելնում էրթում են չարսուից՝ ի՛սկ թագավորի աղջկա շորերից մե ղաթ կռում են Թուրքման օղլուն, հազրը են անում։

Թուրքման օղլին էրթում մտնում է թագավորի աղջկա մոր քումբեթը, հաքնում է շորեր ու թագ է կենում, ինչունի հարսնածի գալը։

Սաբախտան շուտ քաղաքը թունդ է հ'ելնում։ Ցոթ ղաթ դահոլ զուռնա չալղի է անում, խանի բերած հարուրից ավելի ձիավորներ ջիրինդ են խաղում։ Քաղքի մարդիկ բիթուն թոփ էղան, թե էրթանք տեսնինք թագավորի աղջիկը հեռու էրկիր են տանում։

Հարսին բերին հեծուցին ձին։ Մնաս բարով ասին, ու հայդե շտկվան իրանց ճամբով։ Երթում հարսնածը հասնում է հարսի մոր գերեզմնի մոտ։ Հարսը ձիու գլուխը քաշում կայնեցնում է, ասում է.— Ես իմ խան կեսարից մի խնդիր ունիմ անելու, թողնի, մտնիմ իմ մոր գերեզման պագեմ, վեվ գիտե աշխար է, մեկել էս երկրներ պատահեմ թե չէ։

Կեսարին ասում են, թե հարսդ էսենց մի բան է խնդիրք անում թե՝ մտնիմ իմ մորս գերեզմանը պագեմ։

— Լավ,— կոսե խանը,— թող երթա, ձիավորներն էլ իջնին, քիչ դինջանան։

Թագավորի աղջիկը ներս է մտնում քումբեթը, մի քիչ մնում է։ Էնոր տեղ Թուրքման օղլին հ'ելնում է դուրս, երթում նստում է հարսի ձիուն։ Էդ վախտ ձիավորներից մեկը կոսե.— Խանը սաղ էղնի, մեր հարսը մանդր էր, հիմի իմ աչքին խոշոր երևվաց։

Խանը հերսոտում ասում է.— Բերանդ կոռի գը, որ մաշալլահ ասես։

Հայտե, հեծան ձիեր ու քշեցին, գացին հասան իրանց քաղաք։

Սաղ քաղաքը թունդ է հ'ելնում, թե խանի հարսնածը էկավ։ Դահոլով, չալղիով տարան հարսին, խանի մեծ աղջկա տուն իջուցին։ Խանն էլ իրեք աղջիկ ուներ, երկուսը կարգած էր, պզտիկը ազապ էր։ Խանի իրեք աղջիկն էլ թոփ էղան, էկան հարսին տեսնելու։

Թուրքման օղլու աչքը որ տեսնում է խանի պզտի աղջկան, խելքը գլխից երթում է։ Միտքը փոխում է՝ էդ աղջկան էլ ինքը փախցընելու։ Դիշերը Թուրքման օղլին մեկել քուրերին թոմրին ճամբու դրեց, ուր մոտ թողեց մե'կ խանի պզտիկ աղջկան։ Թոմար որ գնացին, մնացին երկուսը միանակ։

Հարսը ասում է տալին.— Մոնց լավ բան կէղներ, որ ախպորդ տեղ, դու էղնեիր իմ նշանածը։

— Ախ,— կըսե խանի աղջիկ,— ես մոնց ուզում էի, որ դու տղա էղնեիր։

— Դեհ,— որ էդենց է, արի մենք սրտով աղոթք անենք, բալքի աստուծ մեզնից մեկին տղա անե։

Հարսն ու տալը կեցան աղոթքի։ Հարսը, որ Թուրքման օղլին էր, քիչ որ աղոթում են, դառնում հարցնում է խանի աղջկան.— Դու մո՞նց ես, տղա չէղա՞ր։

— Չէ,— կոսե աղջիկը։

Մի քիչ էլ որ մնում են հարսն ասում է.— Վալլա հա ես բանըմ ըսիմ, տղա դառա։

Խանի աղջիկ էնենց ուրախացավ, որ ուրախությունից հընկավ հարսի գիրկն ու մի սհաթ էլ իրարից չէին բաժնվում։ Քիչ մը հետո Թուրքմանի տղան կոսե աղջկան.

— Աղջի,— մենք էլ չենք կարա ըստե մնալ, մեր գլուխ կը կոե հերդ, արի, ըստից փախնինք։ Ամա ճարը մնում է քեզի, որ դու էրթաս, հորդ ձիանոցեն էրկու լավ ձի բերես՝ հեծնինք էրթանք։

Խանի աղջիկ էրթում է էրկու հատ քահլան ձի իր հոր ձիաներուց բերում է, էնենց ձի, որ ղուշը չէր կարա բռներ։

Հ'ելան հեծան, ու հայդե հարամու մաղարա, հ'ուր ես, էկանք դիպա քեզ։

Թագավորի տղեն էլ իրան նիշանածին մոր գերեզմընի վրայից փախուցեր տարեր էր էն մաղարեն։ Թուրքման օղլին էգենց էր թամբիհ արել։

Սարախտան շուտ ձեն ցրվավ սաղ քաղքի մեջ թե. «Խանի հարսը, առեր է խանի աղջիկն ու փախել է», խանն էլ յոթը ղաթ դահոլ ղուռնով դալում էր, որ հարսին տաներ պսակ։ Էս խաբարը որ լսեց՝ էրկինք դետին մթնեց, ծնկները թուլացան, էլ չկարաց տեղից ժաժ դալ։ Խանը հրաման տվեց, որ ասկար հեծնի, ամեն թարավ էրթ.ա ման դալու։

Գալում է էն ձիավորը, որ նոր հարս բերած վախտը խանին կոսե թե. «Խան, մեր հարսը պզտիկ էր, հիմի իմ աչքիս խոշոր էրեվաց»։

— Խան ողջ լինի, հրպա դու ընձի ասում էիր՝ բերանդ ցավում է, որ մաշալլահ ասես, հիմի ինչրխ էղավ իմ խոսքս, տեսա՞ր, որ ինչ որ էղավ էն քումբեթից էղավ։

Թուրքման օղլին ու խանի աղջիկ դյուզ քշում գալում հասնում են հարամու մաղարեն, հ'իջնում, ձիերը ներս են քաշում, էրթում աշում, որ թագավորի տղեն իր նիշանածի հետ դինջ պարկել է։

— Հե՞յ դտի, ղորթ որ հում կաթնակեր իսնին էհտիբար չկա, հեչ որ չէ, մեկ ելնիմ կ'աշեմ, թե իմ ախպերս գալում է թե չէ։— էսենց Թուրքման օղլին իրան-իրան քիչ նեղացավ, հետև սիրտ հ'իշավ նստավ։

Մի քանի օր անցնում է, թագավորի տղեն ասում է.— Ախպեր, դու լավ գիտես, որ իմ հեր թագավոր է ու ուրիշ ավլատ էլ չունի։ Ես թափեցի հորս սաղ կարողություն հ'ելա ընկա քու հետևեն էկա, արի հիմի էլ դու ընձի լսե, էրթանք իմ հորս քաղաք։ Վատա էղնի ասսու առաշ, որ իմ հեր մեռած էղավ, քեզի իմ տեղ թագավոր նըստեցնեմ։

Հ՚ելնում հազրում են հարամու ձիերը, ինչքան որ խազնա, մալ, դովլաթ կար բարձան, առան ու շտկվան դեպի թագավորի էրկիրը։

Թագավորն ի՞նչ էր արած, ամեն ճամբու գլուխ մեկ մարդ ղարաղոլ էր դրած, թե. «Վեվ որ իմ ագիս խաբարը բերեց իր կշռնոտով օսկի կը տամ»։

Թուրքման օղլին ու թագավորի տղեն, լավ, հարուստ քարվանով հասան հոր քաղքի մոտ։ Խաբար գնաց թագավորին թե՝ չես ասեր վալլահ, քու տղեն էկավ։

Թագավոր իր վազիրներով հառաջ գնաց։ Գրկեց տղին ու Թուրքման օղլուն, հարսներին առավ տարավ տուն։ Հարսնիք արին; էրկրսին էլ ղայտով պսակեցին։ Թագավոր ծերացել էր, մեռավ։

Թագավորի տղեն երդում էր արեր, Թուրքմանի տղին թագավոր նստեցուց, ինքն էլ էղավ լալա։ Էն հին լալեն, որ էնքան օյիններ էր խաղացեր, էնոր էլ գլուխը զարնել տվեց, քցեց ծովը։

Թուրքմանի տղեն էլ մարդ ղրկեց, թուրքման էլուց իր հոր ու մոր բերեց, պատվով պահեց։ Ինքն ու թագավորի տղեն էլ ինչումի իրանց մահը սիրով ապրան իրար հետ։